

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2015 թվականի օգոստոսի 27-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Բնագիտական ֆակուլտետում 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հարցը /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ 2015թ. առկա ընդունելության արդյունքներով բնագիտական ֆակուլտետ ընդունվել են թվով 17 ուսանողներ:

Քննարկվեցին ուսումնական պլանները: Ուսումնական և արտադրական պրակտիկաների արդյունավետության բարձրացման նպատակով ամբիոնների կողմից առաջարկվել էր կրճատել տեսական ուսուցման համար նախատեսված շաբաթները և այդ ժամանակահատվածը տրամադրել պրակտիկաներին:

Որոշեցին – Մասնագիտությունների բարելավված ուսումնական պլանները, որոնք դասախոսների հետ համատեղ քննարկվել են ամբիոններում, ներկայացնել հաստատման:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա բնագիտական ֆակուլտետի խորհրդի կազմի վերանայման վերաբերյալ հարցը /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Բնագիտական ֆակուլտետի խորհրդի անդամներ Բ. Պ. Մնացականյանի հետ՝ նրա դիմումի հիման վրա պայմանագրի լուծարման և Ֆ. Վ. Ավետիսյանի մահվան հետ կապված՝ խորհրդի նոր անդամներ ընտրելու վերաբերյալ ներկայացվեցին նոր թեկնածություններ:

Որոշեցին – բնագիտական ֆակուլտետի խորհրդի կազմում ընդգրկել կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամիբոնի դասախոս, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր Լ. Ն. Առաքելյանին:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Մ. Հ. Հովհաննիսյան